ՄԱՅՐ ԱԹՈՌ

Մեծիպահոց կիւրակէներին քարոզելու համար նշանակուած են բարձ. Մխիթար, Կարապետ, Կոմիտաս, Մատթէոս, Գարեգին և Բաբգէն վարդապետները՝ Վաղարշապատի եկեղեցում, Մաշտոց վարդապետ Փափազեանն՝ Օշականում և Ապարանի գիւղերում, իսկ Թորգէն վ. Լազարեանն՝ Սարդարապատի գիւղերում։

Ճալէթի վանահայր Սահակ վարդապետ Բաղդասարեանը ամսոյս սկզբին մեկնեց իր պաշտօնատեղին։

Մարտի 14-ին Մայր Աթոռս ժամանեց Նորահաստատ Սինոդի անդամ Նահապետ եպիսկոպոսը։

Մարտի 15-ին Սինոդի Նորահաստատ անդամներ Գեր. Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեանն և Նահապետ եպիսկոպոս Նահապետեանը հրաւիրուեցին Սինոդ, ուր օրինաստահման երդումն ընդունելով հայերէն Տ. անդամոց և Սինոդի Պրոկուրորի ներկայութեան, մասնակցեցին Սինոդի պարապմունքներին։

Վաղարշապատում գտնուած Էջմիածնապատկան կալուածներն-այգիներն ու վարելահողերը և ագարակը բարեկարգելու և կանոնաւորութեան տակ դնելու համար հրաւիրուած գիւղատնտես մասնագէտ պ. Կոստանդին Մելիք-Շահնազարեանը արդէն սկսել է իրան ստանձնած գործը։

Հմայեակ վարդապետ Տէր Սարգսեանը, որ աչքերի տկարութեան պատճառով գնացել էր Երևան, վերադարձաւ և մի քանի օր հանգստանալով մեկնեց իր նոր պաշտօնատեղին՝ Շամախու թեմը, իբրև Կոնսիստորիայի նախանդամ և Սաղիանու ս. Ստեփաննոս վանքի վանահայր։

Մարտի 23-ին դադարեցին ճեմարանում դասերը և հետզհետէ աշակերտները ցրվում են իրանց տները։ Լսարաններում և Զ. դասարանում քննութիւններն սկսուած են։

Տարիների ընթացքում Սինոդ են մտած խնդիրներ որոնցով ժողովուրդը տնատեղ և այգետեղեր է ուզում, Սինոդն արտակարգ նիստեր է նուիրում ժողովրդի պահանջին բաւարարութիւն տալու։

Սինոդի որոշմամբ յատուկ մասնաժողով է կազմած Վաղարշապատին հասանելի ջրի ճանապարհը—Շահարխը կանոնաւորելու համար. այդ մասնաժողովին մասնակցում են Սինոդի անդամ Տ. Բարգեն վարդապետը, վանական կառավարութեան անդամներն, գիւղատնտեսն ու ժողովրդի ներկայացուցիչները։

Վաղարշապատը իր տարածութեան համեմատ ոռոգելու ջուր չունի, այդ պատճառով էլ հողերի մեծ մասը ամայի ընկած են, այժմ Երևանցի ջրաբաշխ-մասնագէտ պ. Մալխասեանցը ուսումնասիրելով տեղական պայմանները զեկուցումն է ներկայացրել Սինոդին, որով առաջարկում է մեքենաների օգնութեամբ ջուր բարձրացնել Սև ջրից և Դօլագ կոչուած ջրամբարը, որ առաջ ծառայելիս է եղել Վաղարշապատին, իսկ վերջերս անուշադրութիւնից փչացել է՝ վերանորոգել. երկուսի համար ծախք հաշուում է պ. մասնագէտ-ջրաբաշխը 35—40 հազար

ռուբլի։ Սինոդն առանձնապէս հետաքրքրվում է ջրի խնդրով։

Խաթունախաբխ և Քիւլթափա կոչված էջմիածնապատկան խոտհարքի կապառալու պ. Թադէոս Ասկարեանը խնդրամատոյց է եղել ս. Սինոդին թոյլ տալ իրան որոշ պայմաններով այդ հողերի վրայ մեքենայի օգնութեամբ ջուր հանել խոտահարքը վարելահող դարձնելու համար։



ԱՅԼ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

Յունվարի 31-ին Русское Слово թերթին Եարօսլաւից հեռագրում են.

Վանահայր Արսէն վարդապետը ժամերգութիւնից յետոյ այսօր հանդիսաւոր կերպով անաթեմա կարդաց յեղափոխականներին, հրէաներին և առհասարակ յեղափոխական շարժման բոլոր մասնակցողներին, իսկ Իլօրիոդ աբեղան մաղթանք կատարեց ռուս ժողովրդի միութիւն կոչուած կուսակցութեան համար։

Նոյն թերթում կարդում ենք.

Նիկոլսկի աւագ քահանան, որին Մոսկվայի և Կալոմնայի միտրապալիտ Վլադիմիրի կողմից յանձնարարուած էր քննութիւն կատարել դպիրների «ինքնագլուխ կազմած միտինգներ» մասին, վերջացնում է իւր վրայ դրած պարտականութիւնը։ Լրագիրների ասելով ամենից շատ մեղաւոր են Մոսկվայի եկեղեցիների դպիրներ՝ Ֆիվէյսկի և Ցվիտկով։ Նրանց յանցաւորութեան ծանր կողմը համարում է այն, որ նրանք միտինգի ժամանակ իրենց թոյլ են տուել յուզարկաւորութեան քայլերգ երգել ազատութեան համար կուռոզների յիշատակին և դրամ հաւաքել փոստ-հեռագրական գործադուլին մասնակցողների օգտին։